

Ա Ռ Ա Կ.

ՇՈՒՆ, ՄԱՐԴ, ԿԱՏՈՒ ԵՒ ԲԱԶԷ.

Մէկ շուն, մէկ մարդ, մէկ կատու մը, մէկ բազէ
 Երգում ըրին անգամ մը որ մէկմէկէ
 Չըբաժնուին յաւիտեան,
 Անկեղծ սիրով միշտ իրարու մօտ մընան:
 Չորսն ալ մէկտեղ կըկենային,
 Կարծեմ նաեւ մէկ ամանէ կուտէին.
 Իրարու խօսք էին տըլած
 Որ ամէն բան հասարակաց
 Ըլլայ չորսին մէջերը,
 Ուրախութիւն, տըրամութիւն, ատելութիւնն ու տէրը.
 Միշտ իրարու կըռնակ կենան,
 Միշտ իրարու օգնական.
 Նաեւ, թէ որ պէտք ըլլայ,
 Մեռնին իրարու վըրայ:
 Ի՛նչպէս եղաւ՝ սոքա չորսը միասին
 Օր մը որսի գընացին.
 Տընէն քաղքէն հեռացան,
 Յոգնած դադրած՝ ջրրի մը քով հանգչեցան.
 Ո՛րը պառկըման՝ սրը նըստըման
 Չորսն ալ քուն եղան:
 Մէյ մ՝ ալ տեսնես անտառէն
 Արջուն մէկը մըրմուռէն
 Յարձակեցաւ ընկաւ յանկարծ վըրանին:
 Այն սոսկալի վըտանգին
 Բազէն թըռաւ՝ ելաւ վեր,
 Կատուն անտառ՝ ծառէն վեր:
 Իսկ մարդն ըսես՝ հոգին կուտար ու կառնէր.
 Յոյսը կեանքէն կըտրեր էր:
 Բայց տես ի՛նչ ըրաւ խօսքի տէր շունը,
 Տես հաւատարմին մեծ քաջութիւնը. —
 Սիրտ ըրաւ՝ ելաւ արջուն գիմացը,
 Փակաւ հաստ վըզին, ըրաւ կըրցածը.
 Խածխըծեց արջուն չորս գին անխընայ,
 Վըրան գլուխն ըրաւ գէշ արիւնլըւայ:
 Իսկ արջը ցաւէն՝ կատղած դռալով,
 Շունը կըտրորէր կարշնեղ թաթերով,

Մինչեւ որ ընկաւ ուժէն քաջ շունը,
 Ուժին հեա փըչեց եւ յետին շունչը:
 Հիմա հարցուր թէ հապա մարդն ինչ ըրաւ. —
 Ամօթ որ քիչ են այն մարդիկ, ամօթ, իրաւ,
 Որ շան մը պէս հաւատարիմ,
 Շան չափ ըլլան մըտերիմ:
 Մինչդեռ կըռռոյ մէջ էին արջն ու շունը,
 Մարդը հրացանն առաւ՝ փախաւ իր տունը:
 Բերնով դիւրին է միշտ սէրն ու շողմանք.
 Լաւ բարեկամը նեղութեան մէջ ճանչնանք.
 Բայց ճշմարիտ բարեկամներ ո՞ւր գըտնանք:
 Եւ ինչ զարմանք.
 Ես այնպիսի բարեկամներ
 Շատ եմ տեսեր
 Որ առակիս մէջի մարդուն նըմանակ
 Ոչ թէ միայն թողուն իւրեանց բարերար
 Իրենց համար կեանքը դըրած ժամանակ,
 Այլ եւ ամէն տեղ բամբասեն չարաչար:

ՅՈՒԼՈՎ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԻՆՁՈՒ ՀԱՄԱՐ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՁԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՁԵՌՔԸ ԽԱՋ ԿԴՐՈՒԻ ԵՐԲԵՄՆ.

(Մարտի ամսատետրին մէջ եղած հարցմունքին պատասխան.)

Պատկերահանաց սովորութիւնն է հին
 ատեններէ ի վեր, որ մարդու մը կերպա-
 րանքը նկարելու ատեն՝ անոր պաշտօնին
 կամ արհեստին կամ վարքին եւ կամ մա-
 հուանը մէկ նշանը քովը կգնեն, կամ ձեռ-
 քը կուտան. ուստի սրբոց պատկերներուն
 ալ ձեռքերը իրենց վարքին, քարոզութեա-
 նը եւ վախճանին մէկ նշանը կնկարեն: Այս-
 պէս, օրինակի համար, Դաւիթ մարգա-
 րէին ձեռքը կուտան սաղմոսարան կամ ֆևր,
 Մովսէսի ձեռքը տասնաբանեան պատուիրա-
 նաց ֆարեհէն ասխակները, Եսայի մարգարէին
 ձեռքը սղոց (սղոցով նահատակուելուն համար),
 Աւետարանչաց ձեռքը գիրք՝ իրենց քովն
 ալ եզեկիէլ մարգարէին տեսլեանը մէջ ե-
 րեւցած չորս կենդանիներէն մէկը, եւ այլն:
 Յովհաննէս Մկրտչին ձեռքն ալ սովորաբար
 դրօշակ (պաշրախ) մը կնկարուի՝ վրան գրուած

այն մարգարէական խօսքը զոր ըսաւ՝ տեսնե-
 լով զՓրկիչն մեր. «Ահա գառն Աստուծոյ որ
 բառնայ զմեզս աշխարհի». երբեմն գառն ալ
 կնկարուի քովը: Այն դրօշակը կամ խաչ-
 վառի ձեւով զարդը՝ պատկերահաններէն
 ոմանք բոլորովին խաչի ձեւով կնկարեն,
 եւ խաչին վրայ փաթուժուած կըաշեն ճեր-
 մակ թուղթ կամ լաթ՝ վրան նոյն խօսքերը
 գրուած. անկից ուրիշներն ալ մինչեւ պարզ
 խաչ եւս տուած են Յովհաննու Մկրտչի ձեռ-
 քը: Եւ որովհետեւ Քրիստոս Տէրն մեր իւր
 սուրբ Կարապետին գլխատուելէն յետոյ խա-
 չուեցաւ, ինչպէս որ յայտնի է, — եթէ սըր-
 բոյն մարգարեալան հոգին ծանօթ չլինէր՝ այդ
 սովորութիւնը իհարկէ իբրեւ պատմութեան
 մտքին ու ժամանակին անյարմար՝ անընդու-
 նելի եւ խոտելի բան կընար համարուիլ: